

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ՝ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԱՎՂՈՍ Զ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻՆ

ՎԱՏԻԿԱՆ

Զերդ Սրբություն,

Մեծագույն ուրախությամբ ողջունեցինք Զեր ներկայացուցիչների՝ հոգեշնորհ հայր Ժերոմ Համմերի և հայր Դյուպրեի ժամանումը Մայր Աթոռ ս. Էջմիածին, որոնք մասնակցեցին սուրբ մեռոնի օրհնության հանդիսություններին՝ արժանանալով մեր միաբանության և համայն մեր հավատացյալ ժողովրդի բացառիկ համակրանքին և հարգանքին:

Մեր խորագույն գոհունակությունն ենք հայտնում նաև այն սքանչելի նամակի համար, որ բարեհաճել էիք ուղարկել Մեզ՝ Զեր նվիրակների հետ միասին: Զեր գիրը ճշմարտապես հուզեց Մեզ և հոգեպես մխիթարեց ու զորացրեց: Երանի՜ թե Տերը արժանի կացուցանի Մեզ՝ ավելին իրագործելու մեր ժողովրդի հոտի մեջ՝ Իր փառքի համար, Իր խոսքի թագավորության համար:

Մեզ համար հաճելի եղավ նաև կարդալ այն տողերը, որով Զեր եղբայրական հրավերն եք ուղղում Մեզ՝ այցելելու Զերդ Սրբությանը ի Հռոմ: Վստահեցնում ենք Զեզ, որ Մեր սրտի համար քաղցր է Զեր հրավերը, և հույսով ենք, որ Աստված մի բարի օր պիտի օգնի Մեզ՝ ճանապարհվելու դեպի ձեր սուրբ Աթոռը:

Թող միշտ անսասան ու փառքի մեջ մնա ձեր մեծ և սուրբ եկեղեցին, և առավել աճեն սերն ու եղբայրությունը բոլոր եկեղեցիների և բոլոր մարդկանց միջև, որոնք միանում են Քրիստոսով:

Եղբայրական հարգալից սիրով՝

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

31 հոկտեմբերի 1969 թ.,
Ս. Էջմիածին